Արամ Իսաբեկյան. «Ընթերցողներին հուսախաբ չարեց» - թերթ, «Կրթություն», Ե., 16.11.2011

Հսկայական է մամուլի դերը հասարակական կյանքում:

«Կրթությունը» այն պարբերականն է, որը վաղուց էր սիրելի և իր գոյության նոր տարեշրջանի 14 տարիների ընթացքում ևս ընթերցողներին հուսախաբ չարեց: Թերթի էջերում բարձրացված հրատապ հարցերը, կրթական համակարգի բարեփոխումների քննարկումներն ու լուրջ վերլուծությունները ավելի կարևորեցին նրա դերը:

Բարձր պրոֆեսիոնալիզմը, հիանալի գրական հայրերենը, ընտրված նյութերի կարևորությունն ու մատուցման էթիկան, որով աչքի են ընկնում տպագրված հոդվածները, ապահովեցին ու կայուն դարձրին թերթի բարձր նշաձողը:

Շաբաթաթերթը հատուկ նշանակություն է տվել ու նաև լուրջ ներդրում արել երիտասարդության հայեցի դաստիարակության հույժ կարևոր գործում:

Մեծ հիմքեր կան հավաստելու, որ «Կրթությունը» լրագրողական մշակույթի լավագույն օրինակ է:

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի դասախոսների և ուսանողների անունից ջերմորեն շնորհավորում եմ «Կրթություն» շաբաթաթերթին՝ նոր տարեշրջանի 500-րդ հոբելյանական համարի տպագրման առիթով, պարբերականին մաղթում երկարակեցություն, իսկ խմբագրակազմին նոր հաջողություններ բարդ ու կարևոր առաքելության իրականացման գործում:

Արամ Իսաբեկյան
Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր, պրոֆեսոր
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ